

ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԻ

Գարիկ Ավագյան

ՀՀ սնանկության դատարանի դատավոր,
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս,
Հայաստանում ֆրանսիական համալսարանի դասախոս
garik.avagyan@ysu.am
ORCID - 0009-0007-5156-6126

Մարիամ Մելքոնյան

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող
mariam.melkonyan10@edu.ysu.am
ORCID - 0009-0002-8491-2308

Համառոտագիր: Սնանկության իրավունքի՝ որպես իրավունքի համակարգի կառուցվածքային տարրի վերաբերյալ թե՛ իրավունքի տեսությունում, թե՛ գործնականում առկա է միասնական մոտեցում: ՀՀ-ում չկան գիտական հետազոտություններ վերոնշյալ խնդրի կապակցությամբ, ուստի աշխատանքը նպատակ է հետապնդել առաջին հերթին տալ սնանկության իրավունքի բովանդակային և տեսական բնութագիրը, այնուհետև փորձել հստակեցնել դրա տեղն ու դերը ՀՀ իրավունքի համակարգում: Ըստ հեղինակների՝ սնանկության իրավունքը բարդ, բազմաշերտ և համալիր իրավունքի համակարգի կառուցվածքային տարր է, ինչին ամբողջովին բնորոշ է են իրավունքի տեսությանը արդեն իսկ հայտնի իրավունքի համակարգի կառուցվածքային տարրերից որևէ մեկի հատկանիշները: Ուստի առաջարկվում է տեսության մեջ ներդնել սնանկության իրավունքին կամ իրավունքի համակարգի կառուցվածքային համանման տարրերը բնորոշող նոր կատեգորիա, ինչն ամբողջովին կհամապատասխանի դրանց բնույթին: Դրա կատարումը էական ազդեցություն կունենա իրավունքի տեսական և գործնական առումներով զարգացման վրա, քանի որ իրավունքի համակարգի կառուցվածքային տարրի հստակ բնորոշումը և դրա պատկանելիության վերահանումը նպաստում են իրավակիրառ պրակտիկայում խնդիրներից խուսափելուն, միասնական մոտեցումների ձևավորմանը և զարգացման հեռանկարներ են ստեղծում:

Բանալի բառեր – իրավունքի համակարգ; իրավունքի համակարգի կառուցվածքային տարրեր; սնանկության իրավունք; նյութական և վարութային նորմեր; հանրային և մասնավոր իրավունք; իրավունքի համակարգի համալիր կառուցվածքային տարր; քաղաքացիական դատավարության տարբերակված ձև:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սնանկության իրավունքի՝ իրավունքի համակարգի կառուցվածքային տարրերից որևէ մեկին (իրավունքի ճյուղ, ենթաճյուղ, ինստիտուտ) պատկանելության հարցը մշտապես եղել է տեսական քննարկումների առարկա: Այդ հարցի կապակցությամբ տեսաբանների մոտ առկա են տարակարծություններ, մասնավորապես՝ սնանկության իրավունքը դիտարկվում է որպես.

1. քաղաքացիական կամ առևտրային, տնտեսական իրավունքի ինստիտուտ,
2. իրավունքի համալիր ինստիտուտ,

3. միջճյուղային ինստիտուտ,
4. օրենսդրության համալիր ճյուղ¹,
5. իրավունքի ինքնուրույն ճյուղ², և այլն:

Նկատի ունենալով այն, որ թե՛ տեսության մեջ, թե՛ գործնականում առկա չէ սնանկության՝ որպես իրավունքի համակարգի կառուցվածքային տարրերից որևէ մեկին պատկանելության հարցի վերաբերյալ միասնական մոտեցում, հայ հետազոտողների շրջանում գրեթե լիովին բացակայում են քննարկվող թեմայի վերաբերյալ ուսումնասիրությունները, սույն հոդվածով հնարավորինս կփորձենք որոշակիացնել սնանկության իրավունքի տեղն ու դերը Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգում, քանի որ վերջինս ունի տեսական և գործնական էական նշանակություն, քանզի իրավունքի ճյուղի հաջող ձևավորումը իրավունքի կանոնների արդյունավետ կիրառման հիմնական գրավականն է: Ավելին, հասարակությունում նորմատիվ իրավական կարգավորիչների համահունչ, տրամաբանորեն ամբողջական համակարգի ստեղծումը, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի համակարգումը թույլ են տալիս անհրաժեշտ իրավական նորմերը արագ որոնել և գտնել³:

Սնանկության՝ որպես իրավունքի համակարգի ինքնուրույն կառուցվածքային տարրի բնութագրման համար օգտվել ենք զարգացման դիալեկտիկական ընթերցման (պատմականության սկզբունքի) մեթոդաբանությունից, որը ոչ այլ ինչ է, քան հետազոտվող օբյեկտի տրամաբանական արտապատկերումը: Այս մեթոդի դիրքերից սնանկությունն ուսումնասիրվել է դրա դինամիկ զարգացման գործընթացում նկատի ունենալով դրա կապը և կախվածությունը քաղաքացիական և քաղաքացիական դատավարության իրավունքներից: Միաժամանակ օգտագործվել են նաև այնպիսի մասնավոր մեթոդներ, ինչպիսիք են իրավահամեմատական, դեդուկտիվ և դատական պրակտիկայի ընդհանրացման մեթոդները:

2. ԲՈՒՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Այսպես, **իրավունքի ճյուղ** է համարվում իրավական նորմերի այն համակցությունը, որը իրավունքի համակարգի ինքնուրույն մաս է և կարգավորում է որակապես միասեռ հասարակական հարաբերությունների ոլորտ՝ իրեն հատուկ մեթոդով⁴: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ իրավունքի ճյուղը իրավական նորմերի և ինստիտուտների առանձին ամբողջություն է, որը կարգավորում է միատարր սոցիալական հարաբերություններ, ինչն արտացոլում է համակարգ ձևավորող կապերի ավելի բարձր մակարդակ և բնութագրվում է որոշակի ամբողջականությամբ և ինքնավարությամբ⁵: Իրավունքի ճյուղը ներկայացվում է նաև որպես «պետությունում գործող իրավական ամբողջության կառուցվածքային, կազմակերպական առանձին և անբաժանելի մաս (ճյուղ), իրավական համակարգի բնորոշ տարր, որն արտահայտում է իր էությունը զարգացման համապատասխան փուլում, ունի իրավական, անհատական ընդհանուր հատկանիշներ և նախատեսված է հասարակայնության հետ կապերի որոշակի տարածքի (բլոկի) մեթոդաբանորեն մեկուսացված կարգա-

¹ Տե՛ս **Соколов А. Д.** Модель института несостоятельности (банкротства) в системе российского права, «Вестник науки» № 12 (69) Том 4, Москва, 2023, էջ 562:

² Տե՛ս **Телюкина М. В.** Предмет, метод, цели, принципы и иные характеристики конкурсного права // Труды Института государства и права РАН, Том 12, № 6, 2020, էջ 65:

³ Տե՛ս **Бибилло В. Н.** Теория государства и права, Право и экономика, Минск, 2015, էջ 126:

⁴ Տե՛ս **Վաղարշյան Ա. Գ.** Պետության և իրավունքի տեսություն-2. Ղափախություններ, Երևանի պետական համալսարան, Երևան, 2017, էջ 189:

⁵ Տե՛ս **Алексеев С. С., Архипов С. И.** Теория государства и права, М., 2005, էջ 270:

<https://www.at.alleng.org/d/jur/jur401.htm> (վերջին մուտք՝ 23.09.2024):

վորման համար»¹: Իրավունքի ճյուղերն առանձնացնելիս էական նշանակություն ունի նաև դրանց օրենսդրական ամրագրման ակտի առկայությունը (օրենք, օրենսգիրք)²: Վերոշարադրյալն ամփոփելով և ընդգծելով իրավունքի տեսությանը հայտնի մոտեցումներն իրավունքի ճյուղին բնորոշ հատկանիշների վերաբերյալ՝ ստացվում է, որ իրավունքի ճյուղը **1)** իրավունքի համակարգի ինքնուրույն մաս է, **2)** դրա բաղկացուցիչ մասն են կազմում իրավունքի ենթաճյուղերը, ինստիտուտները (ներքին և նորմերը, **3)** դրան բնորոշ են իրավունքի նորմերի առավել սերտ կապվածությունը, ամբողջականությունը և ինքնավարությունը, **4)** ունի իրեն հատուկ կարգավորման առարկա, ինչի կազմում են որակապես միասեռ հասարակական հարաբերություններ, **5)** առանձնանում են առարկան ձևավորող հատուկ մեթոդով (ներքին), **6)** կոդիֆիկացիայի արդյունքում ստանում է նորմատիվ բնույթ, ձև, **7)** առանձնանում է իր ներքին կառուցվածքով՝ ընդհանուր և հատուկ մասերի բաժանմամբ:

Իրավունքի ենթաճյուղը ձևավորվում է հետևյալ պայմանների առկայությամբ՝ **1)** իրավունքի ենթաճյուղի մաս կազմող մի շարք միատարր ինստիտուտների միավորում, որոնց բնութագրական է հատուկ բնույթն ու ճյուղային մեկուսացվածությունը, **2)** դրա կազմում են ընդհանուր ինստիտուտներ կամ ինստիտուտների խմբեր, **3)** դրա մասը կազմող հասարակական հարաբերությունները միատարր են, իսկ ինստիտուտները՝ «մասնագիտացված» և «տարբերակված»³:

Իսկ **իրավունքի ինստիտուտը** իրավական նորմերի համեմատաբար փոքր, կայուն խումբ է, որը կարգավորում է սոցիալական հարաբերությունների որոշակի տեսակ⁴: Այլ տեսակետների համաձայն՝ իրավունքի ինստիտուտները կոչված են կարգավորելու հասարակական կյանքի առանձին հատվածներ, կողմեր: Ինստիտուտը իրավունքի ճյուղի բաղկացուցիչ մաս է, բլոկ, օղակ, և ամեն ճյուղ բազմաթիվ ինստիտուտներ ունի⁵: Ինստիտուտները կարող են լինել ճյուղային և միջճյուղային (համալիր)⁶:

Հարկ է նշել, որ բավականին խրթին է իրավունքի ճյուղերը միմյանցից և դրանք ինստիտուտներից տարանջատելը, քանի որ անհրաժեշտ է խորը վերլուծություն կատարել՝ ուսումնասիրելով ոլորտի իրավական կարգավորման **առարկան և մեթոդը**: Այս պայմաններում անհրաժեշտ է հերթականությամբ քննարկել վերոնշյալ կատեգորիաները:

Հայտնի է, որ իրավունքի կարգավորման առարկան կազմում են այն հասարակական հարաբերությունները, որոնց առկայությամբ են պայմանավորվում իրավունքի տվյալ ճյուղի նորմերի գոյությունն ու գործողությունը: Նախքան անդրադառնալը սնանկության իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունների բնույթին՝ կարիք կա նախ և առաջ բացահայտելու սնանկության իրավունքի հասկացությունը՝ հաշվի առնելով գիտնականների առաջ քաշած տեսակետները դրա իրավական բնույթի էական հատկանիշների վերաբերյալ:

¹ Ст'ю Курдюк Г. П. Отрасль права как элемент системы права (Теоретико-правовое исследование): дис. ... канд. юрид. наук. Краснодар, 2004:

² Ст'ю Колоткина О. А., Морозова А. С., Ягофарова И. Д. Теория государства и права: Учебное пособие / Москва : ИНФРА-М, 2021, էջ 294:

³ Ст'ю Минбалеєв А. В. Подотрасль права как элемент системы права (на примере права массовых коммуникаций), Вестник ЮУрГУ. Серия «Право», том 13, № 4, Челябинск, 2013.

⁴ Ст'ю Матузов Н. И., Малько А. В. Теория государства и права: Учебник, Юрист, 2004, էջ 151:

https://pravo-olymp.ru/wp-content/uploads/2013/04/TGP_Matuzov_Malko.pdf (վերջին մուտք՝ 23.09.2024):

⁵ Ст'ю նույն տեղում:

⁶ Ст'ю Алексеев С. С., Архипов С. И., Корельский В. М., Леушин В. И., Перевалов В. Д., Пучков О. А., Русинов Р. К., Семитко А. П., Тарасов Н. Н., Шабуров А. С. Теория государства и права, М., 2005, էջ 270:

Այսպես, Վ. Ֆ. Պոպոնդոպուլոն առաջարկում էր տարբերակել մրցութային իրավունք և մրցութային վարույթ հասկացությունները՝ համարելով, որ մրցութային իրավունքը մասնավոր իրավունքի, իսկ մրցութային վարույթը հանրային իրավունքի ինստիտուտներ են¹։ Մեր կարծիքով՝ վերոնշյալ բաժանում-դասակարգումն այնքան էլ տեղին չէ, քանի որ սնանկության (կամ մրցութային) իրավունք և վարույթ հասկացությունները սերտորեն փոխկապված են և չեն կարող գոյություն ունենալ միմյանցից անկախ, բացի այդ, դրանք միևնույն երևույթի դրսևորման ձևեր են, որոնք հարաբերակցվում են ինչպես մասը և ամբողջը, ուստի նպատակահարմար է սնանկության իրավունք եզրույթը դիտարկել որպես իրավունքի համակարգի քննարկվող տարրի ընդհանրական բնորոշում և տարբերակել դրա նյութական և վարութային բնույթի նորմերի իրավական բնույթը՝ այդպիսով առավել համակարգային և կանոնակարգված դարձնելով իրավունքը և դրա համակարգը։ Նյութաիրավական և վարութային նորմերի իրավաբանական բնույթի հաշվառմամբ անհրաժեշտ է իրավունքի հասկացությունը ձևակերպելիս ընդգծել իրավունքի նորմերով կարգավորվող և վարույթի շրջանակներում գործող հարաբերությունների նաև արտադատական կողմը, ինչը հատկապես կարգավորվում է իրավունքի նյութական նորմերով և ունի էական նշանակություն վարույթի շրջանակներում առաջացող դատավարական հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովման վրա, քանի որ առանց արտադատական ընթացակարգերի կիրառման սնանկության վարույթը խիստ թերի, իսկ դրա բուն նպատակները անիրագործելի կլինեին։

Իսկ Ս. Վ. Տելյուկինան, տալով մրցութային իրավունքի հասկացությունը, հատկապես ընդգծել է կարգավորվող հարաբերությունների նյութաիրավական կողմը. ըստ նրա՝ մրցութային իրավունքը ուսմունք է պարտապանի անվճարունակության (սնանկության) մասին, նորմերի համակարգ է, որը կարգավորում է այն պարտապանների իրավունքներն ու պարտականությունները, ովքեր, գույքի անբավարարությամբ պայմանավորված, չեն կատարում պարտավորությունները պարտատերերի և երրորդ անձանց նկատմամբ²։

Հետևաբար, սնանկության իրավունքը դատարան ներկայացվող սնանկության (նաև վտանգի) դիմումի քննությանը, արտադատական մեխանիզմներով վարույթի պատշաճ ընթացքի ապահովմանը և գործի քննությամբ որոշումների կայացմանն ուղղված՝ դատարանի և վարույթի մասնակիցների գործողությունների և դրանց հետևանքով առաջացող հարաբերությունների համակցություն է, որ կարգավորվում է սնանկության իրավունքի նորմերով և ամբողջացնում կոնկրետ սնանկության գործով դատական և արտադատական գործունեության սահմանները։

Իսկ սնանկության գործ ասվածը կարելի է բնորոշել որպես իրավական խնդիր, որը ծագել է սնանկության և քաղաքացիական, երբեմն միաժամանակ նաև ընտանեկան, աշխատանքային, հողային, հարկային կամ վարչական իրավունքով կարգավորվող հարցերի շուրջ, ինչն առնչվում է պարտապանի առկա վճարային պարտավորությունների չկատարմանը, դրանց կատարման համար գույքի անբավարարությանը, պարտապանի մոտ սնանկության հատկանիշների առկայությանը, վերջինիս դեմ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջի ներկայացմանը, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարման համար հնարավոր եղանակներից (պարտապանի լուծարում, ֆինանսական առողջացում) որևէ մեկի ընտրությանը, և պահանջում է օրենքով սահմանված ընթացակարգով լուծում դրա իրավասությունն ունեցող պետական մարմնի կողմից։ Ըստ էության, Օրենքում օգտագործվող «սնանկության գործ» հասկացության սահմանադրաիրավական բու-

¹ Տե՛ս Попондопуло В.Ф. Конкурсное право, М., 2001, էջ 34։

² Տե՛ս Телюкина М. В. Основы конкурсного права, Волтерс Клувер, М., 2004, էջ 60։

վանդակությունը բացահայտելիս ՀՀ սահմանադրական դատարանը համանման եզրահանգման է եկել¹:

Սնանկության իրավունքի կարգավորման առարկան. Անդրադառնալով սնանկության իրավունքի առարկային՝ նախ և առաջ անհրաժեշտ է բացահայտել սնանկության իրավահարաբերությունները կարգավորող նորմերի բնույթը: Վերջինս պայմանավորված է սնանկության հարաբերությունների՝ իրավունքի նորմերով կարգավորվելու արդյունքում իրավահարաբերության «կարգավիճակ ստանալու» հանգամանքով:

Սնանկության իրավունքը կարգավորող իրավունքի նորմերին բնորոշ է հանրային և մասնավոր, ինչպես նաև նյութական և վարության բնույթը: Այսպես, **հանրային իրավունքն** առնչվում է իրավունքի այն հատվածին, որն ուղղակիորեն կապված է պետությանն ու դրա ուժային գործունեությանը: Իրավունքը հանրային-իրավական համարելու համար պետք է հաշվի առնել մի շարք չափանիշներ՝ 1) կենտրոնացվածությունը հասարակությունում, 2) կարգապահության մակարդակը, և 3) աստիճանակարգությունը: Ստացվում է, որ իրավունքը դրսևորվում է պետական իշխանության գործունեությանն իրավական բնույթ տալով, ինչն արտահայտվում է պետական վերահսկողությամբ՝ շեշտ դնելով իրավունքի սահմանափակումների, անձանց համար պարտականությունների առաջացման վրա և այլն: Իսկ **մասնավոր իրավունքն** արտահայտվում է ապակենտրոնացմամբ, առանձին սուբյեկտներին ազատության տրամադրմամբ: Տարբերությունը հանրային իրավունքից այն է, որ սուբյեկտները կարող են որոշումներ կայացնել առանց նախապես ծրագրավորված և տիպային կանոնների՝ փոխարենը ղեկավարվել սեփական կամքով, լինելով ինքնավար²:

Իսկ սնանկության իրավահարաբերություններն աչքի են ընկնում բարդ և բազմաշերտ բովանդակայնությամբ, քանի որ կարգավորվում են մասնավոր իրավունքի (օրինակ՝ պարտապանի և պարտատերերի, կամ սնանկության գործով կառավարչի և պարտատերերի միջև գոյություն ունեցող իրավահարաբերությունները), և հանրային իրավունքի (օրինակ՝ դատարանի և սնանկության վարույթի մասնակիցների միջև իրավահարաբերությունները) նորմերով: Իրավունքը կարգավորող նորմերը հստակ սահմաններ են առաջ բերում վարության գործողությունների կատարման համար, և դատարանի դերը մեծ է այդ գործընթացում, իսկ մասնավոր-իրավական բնույթն արտահայտվում է կողմերի տնօրինչական գործողությունների կատարման հնարավորության ընձեռմամբ, արտադատական ընթացակարգերի նախատեսմամբ:

Ինչ վերաբերում է սնանկության իրավունքի նորմերի նյութական և դատավարական բնույթին, ապա անհրաժեշտ է նշել, որ դրանք միախառնված են, քանի որ Օրենքը կարգավորում է ինչպես վարույթի առանձնահատկություններին առնչվող, այսինքն՝ դատավարական իրավահարաբերություններ, այնպես էլ՝ դրանից դուրս կարգավորվող իրավահարաբերությունները, այսինքն՝ նյութական, որոնք առնչվում են պարտատերերի ժողովի (խորհրդի) լիազորություններին և գործունեության կարգին, կառավարչի կարգավիճակին և լիազորություններին, պարտատերերի պահանջների բավարարման հերթականության սահմանմանը, ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում թույլատրելի միջոցառումներին և այլն:

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-932 գործով 11.01.2011 թվականի որոշումը:

² Տե՛ս **Алексеев С. С.** Право. Азбука. Теория. Философия. Опыт комплексного исследования, М., 1999, էջ 68:

<https://privlaw.ru/upload/iblock/584/m9xo0gdy6cd9eh4tbi5omm22s3pp57lq.pdf> (վերջին մուտք՝ 23.09.2024):

Սնանկության իրավաբանական բնույթի վերաբերյալ առկա են երկու տեսություններ. ըստ օբյեկտային տեսության՝ այն հիմնվում է պարտապանի գույքային դրության վրա՝ նրան հնարավորություն չտալով իր պարտատերերի նկատմամբ կատարել պարտավորությունները¹, սակայն ըստ սուբյեկտային տեսության՝ անվճարունակությունը (սնանկությունը) պարտապանի հատուկ վիճակ է, երբ նա ի վիճակի չէ մարել իր պարտքերը²: Վերոնշյալի համատեքստում ավելորդ չէ շեշտել, որ սնանկության իրավունքի կարգավորման առարկան ինքնատիպ է, քանի որ միաժամանակ կարգավորում է գույքային բնույթի հասարակական հարաբերությունների առաջացման, փոփոխման և դադարման նյութաիրավական և վարույթային կողմերը, որոնք նյութաիրավական տեսանկյունից դասական իմաստով չեն նույնանում քաղաքացիական, վարչական, հարկային կամ հողային իրավունքում օգտագործվող դրանք բովանդակությամբ, բացի դա՝ գործի քննությամբ հաստատվում է սնանկ ճանաչվող անձի վերաբերյալ իրավաբանական փաստ, ինչը նրա իրավական կարգավիճակի մաս է դառնալու:

Նկատի ունենալով, որ մեծամասամբ քննարկվում է սնանկության իրավունքի՝ քաղաքացիական իրավունքի ինստիտուտ լինելու հանգամանքը, հարկ է բացահայտել վերջինիս կարգավորման առարկան՝ միաժամանակ ընդգծելով դրա և սնանկության իրավունքի առարկաների կարգավորման հիմքում ընկած տարբերություններն ու ընդհանրությունները: Այսպես, քաղաքացիական իրավունքը կարգավորում է այն հասարակական հարաբերությունները, որոնք առնչվում են որոշակի անձանց գույքային շահերին, այսինքն՝ սեփականությանը, գույքային շահի փոխանակմանը, ժառանգությամբ սեփականության փոխանցմանը և մտավոր գործունեության արդյունքներին³:

Իսկ սնանկության իրավունքը կարգավորում է այն հասարակական հարաբերությունները, որոնք առնչվում են անձի մոտ սնանկության հատկանիշների առկայությամբ պայմանավորված իրավաբանական փաստի հաստատմանը, ինչպես նաև վարույթին արհեստավարժ մարմին ներգրավելու պայմաններում անձին ֆինանսապես առողջացնելուն կամ տնտեսական շրջանառությունից դուրս մղելուն՝ պայմանավորված վճարային պարտավորության առկայությամբ, դրա ոչ պատշաճ կատարմամբ, ինչպես նաև գույքի անբավարարությամբ:

Վերոնշյալ իրավական կատեգորիաների միջև առկա են հետևյալ տարբերությունները՝

1. Քաղաքացիաիրավական բնույթի իրավունքների ծագման հիմքերը թվարկված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում⁴, և դրանք են այն իրավաբանական փաստերը, որոնք առկայությամբ է պայմանավորվում քաղաքացիաիրավական հարաբերությունների գոյությունը, իսկ սնանկության իրավաբանական հարաբերությունների համակցության դեպքում, որոնք են.

1) որոշակի պայմանների առկայություն («Սնանկության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածում թվարկված սնանկության հատկանիշներ⁵),

2) օրենքով սահմանված կարգով սնանկության վարույթի հարուցում,

¹ Տե՛ս Шершеневич Г. Ф. Учение о несостоятельности, Казань, 1890, էջ 75:

² Տե՛ս Пахаруков А. А. Правовое регулирование конкурсного производства юридических лиц (вопросы теории и практики): Дис. ... канд. юрид. наук. Иркутск, 2007, էջ 57–60:

³ Տե՛ս Гражданское право: Учебник. В 2 т. / Под ред. Б. М. Гонгало. Т. 1. 2-е изд. Перераб. и доп., М., Статут, 2017, էջ 41:

⁴ ՀՕ-239, ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50), ընդունվել է 05 մայիսի 1998թ., ուժի մեջ է մտել 01 հունվարի 1999թ.:

⁵ ՀՀ ՊՏ 2007.01.31/7, ընդունվել է 25 դեկտեմբերի 2006 թվականին, ուժի մեջ է մտել 10 փետրվարի 2007 թվականին:

3) օրենքով սահմանված կարգով անձին սնանկ ճանաչելը,
 4) վարույթի շրջանակներում պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելը,
 5) ներկայացված պահանջների բավարարման համար հատուկ կարգ սահմանելը¹:

2. Քաղաքացիական իրավունքում հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմնական հանգամանքը գույքային շահի (կամ անձնական ոչ գույքային շահի, ինչն այնուամենայնիվ կարող է ունենալ գույքային դրսևորում) և դրա հնարավոր դրսևորումների առկայությունը կամ բացակայությունն է, այսինքն՝ դրա օբյեկտը գույքային շահն է: Սնանկության իրավունքի օբյեկտը ևս գույքային շահն է, սակայն անձի գույքային իրավունքների տնօրինումը կատարվում է միմիայն պարտատերերի բազմաթիվության, հարկադիր կատարման վարույթում պարտավորության առարկայի վրա բռնագանձման տարածման անհնարինության պայմաններում և տնտեսական շրջանառությունը «բեռնաթափելու» կամ ֆինանսապես «տկար» սուբյեկտին շրջանառություն հետ բերելու հնարավորության ընձեռնման նպատակով:

3. Սնանկությունը սուբյեկտի համար իր բնականոն գործունեության խաթարման հետևանքն է, ինչի կարգավորումը ոչ թե շաղկապվում է միայն քաղաքացիական իրավունքի նորմերին, այլ իր նպատակներով և վարույթային բնույթով առանձնանում և առաջ է բերում էապես տարբերվող հետևանքներ, ինչը բնորոշվում է նաև որպես սուբյեկտի իրավական կարգավիճակի հատկանիշ:

4. Սնանկության իրավունքն ունի կատարողական վարույթին բնորոշ տարրեր, քանզի մեծաթիվ դեպքերում նախաձեռնվում է հարկադիր կատարման վարույթում պարտավորության առարկայի վրա բռնագանձման տարածման անհնարինության պայմաններում², և սնանկության վարույթի մասնագիտացված բնույթը, ինչպես նաև գույքի հայտնաբերման և իրացման համար նախատեսված գործիքակազմի առկայությունը լրացուցիչ նախադրյալներ են ստեղծում պարտավորությունների կատարման համար: Վերոշարադրյալը հիմնականում կիրառվում է այն պայմաններում, երբ քաղաքացիական կամ դրա ենթաձյուղ համարվող գործարարական իրավունքով կարգավորվող նորմերով լուծված վեճի արդյունքում կայացված դատական ակտն ըստ էության անկատար է մնում: Ստացվում է, որ սնանկությունը անձի գույքային կամ պարտավորական իրավունքների շուրջ ծագած վեճի, դրանց արդյունքում առկա պարտավորությունների չկատարման, սուբյեկտի մոտ սնանկության հատկանիշների առկայությամբ նախաձեռնված վարույթ է, ինչը հաջորդում է քաղաքացիական (կամ գործարարական) իրավունքի նորմերով կարգավորվող իրավահարաբերություններին:

5. Սնանկության իրավունքը կարգավորում է միասեռ հասարակական հարաբերություններ, ինչը ՀՀ-ում կարգավորվում է միասնական օրենսդրական ակտով՝ Օրենքով և հարակից օրենքով³: Օրենքը բաղկացած է 107 հոդվածներից, որոնք կարգավորում են վարույթի ընդհանուր հիմունքները, սնանկության վարույթի մասնակիցների իրավական կարգավիճակը, պարտատերերի պահանջների հաստատման և բավարարման կարգը, սնանկության վտանգի, ֆինանսական առողջացման

¹ Տե՛ս **Карелина С. А.** Механизм правового регулирования отношений несостоятельности, Москва, 2008, էջ 207:

² Տե՛ս **Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի** (ընդունվել է 05 մայիսի 1998 թվականի, ուժի մեջ է մտել 01 հունվարի 1999 թվականին, ՀՕ-221, ՀՀՊՏ 1998.06.15/12(45)) 41-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

³ Տե՛ս **Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին ՀՀ օրենքը** (ընդունվել է 06 նոյեմբերի 2001 թվականի, ուժի մեջ է մտել 15 դեկտեմբերի 2001 թվականին, ՀՕ-262, ՀՀՊՏ 2001.12.15/40(172)):

ծրագրի, իրավաբանական անձի լուծարման, անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման վարույթների և սնանկության վարույթի ավարտին առնչվող հարցերը և այլն: Օրենքի վերոնշյալ կառուցվածքային մասերը կարգավորում են վարույթի՝ միմյանցից որոշակի չափով անկախ և տարբեր փուլեր, որոնցից յուրաքանչյուրն ընթանում է Օրենքով սահմանված ընթացակարգով: Ընդ որում, սնանկության վարույթի փուլային շարունակականությունը պայմանավորված է սնանկության գործերի առանձնահատկություններով՝ յուրաքանչյուր փուլին տրամաբանորեն հաջորդում է մյուս փուլը, միևնույն ժամանակ կան փուլեր, որոնցից ոչ բոլորն են պարտադիր:

Ինչ վերաբերում է քաղաքացիական և սնանկության իրավունքների ընդհանրությանը, ապա այն հիմնականում դրսևորվում է պարտավորությունների պատշաճ կատարմանը, վերջինիս ապահովմանը և պարտատերերի բազմաթիվության պարագայում առկա դրամական միջոցների բաշխման հերթականության որոշմանը: Սակայն սնանկության իրավունքի նորմերը քաղաքացիական իրավունքի նորմերի նկատմամբ դիտվում են որպես հատուկ նորմեր, և վեճի բնության ընթացքում դատարանը ղեկավարվում է *lex specialis derogat legi generali* հայտնի սկզբունքով¹ «առաջնայնություն» տալով սնանկության իրավունքի նորմերին:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ ստացվում է, որ սնանկության իրավունքի որոշ նորմեր քաղաքացիական իրավունքի արտահայտման մասնավոր դեպքեր են, որոնք վերջինիցս ունեն ընդգծված տարբերություններ: Դա պայմանավորված է սնանկության իրավունքի նորմերի համալիր բնությով, քանզի սնանկության իրավահարաբերությունների կարգավորման հարցում առանձնահատուկ տեղ ունեն նաև վարույթային նորմերը և հարաբերությունները:

Ինչ վերաբերում է քաղաքացիական դատավարության և սնանկության իրավունքների միջև առկա կապին, ապա ավելորդ չէ նշել, որ այն բավականին սերտ է: Այսպես, քաղաքացիական դատավարությունը վարույթային իրավահարաբերությունների ամբողջություն է, որն առաջանում է դատարանի և վարույթի մյուս մասնակիցների միջև դատարանի կողմից քաղաքացիական գործերով (լայն իմաստով) արդարադատություն (գործի բնություն և վեճի լուծում) իրականացնելիս²: Ավելորդ չէ նշել, որ սնանկության և քաղաքացիական դատավարության իրավունքների հասկացություններում և բովանդակություններում կան էական ընդհանրություններ՝ պայմանավորված վարույթների շրջանակում արդարադատության իրականացմամբ: Ընդ որում, եթե քննարկելու լինենք միայն սնանկության վարույթում առաջացող դատավարական հարաբերությունները և դրանք կարգավորող նորմերը, ապա կարող ենք նշել, որ սնանկության իրավունքը քաղաքացիական դատավարության իրավունքի ենթաձևեր է, քանզի սնանկության վարույթում գործող բոլոր ընթացակարգային հարաբերությունների հիմքում ընկած են քաղաքացիական դատավարության տրամաբանությունը և կարգավորումները, ինչի մասին վկայում է նաև Օրենքի 1-ին հոդվածը: Իհարկե սնանկությունն ունի իր ընթացակարգային կարգավորման առանձնահատկությունները՝ պայմանավորված վարույթի նպատակներով, սակայն դրանք այնուամենայնիվ բխում են քաղաքացիական դատավարության կարգավորման ձևից: Բացի այդ, եթե սնանկության գործով կառավարչի իրավական կարգավիճակին և գործունեությանը, ինչպես նաև ֆինանսական առողջացման ծրագրի

¹ Իրավունքի տեսությանը հայտնի «հատուկ նորմը դուրս է մղում ընդհանուր նորմին» սկզբունքը տեղ է գտել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում:

² См. Гражданское процессуальное право: Учебник: [в 2 т.] / под ред. П. В. Крашенинникова. – 2-е изд., перераб. и доп. – Москва: Статут, 2022, էջ 33:
https://www.consultant.ru/edu/student/download_books/book/grazhdanskoe_processualnoe_pravo_uchebnik_v_2_t_tom_1_obshchaya_chast_pod_red_pv_krasheninikova/ (վերջին մուտք՝ 23.09.2024):

կարգավորմանն ուղղված իրավական նորմերի ամբողջությունը դիտարկենք որպես սնանկության իրավունքի ինստիտուտներ, ապա կարող ենք արձանագրել, որ ենթաձյուղի մաս կազմող ինստիտուտներն իրենց հերթին նեղ մասնագիտացված և տարբերակված են: Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք նշել, որ սնանկության իրավունքի ընթացակարգային նորմերի իրավական բնույթի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այն համապատասխանում է իրավունքի ենթաձյուղին համապատասխանող պահանջներին, քանի որ ունի հատուկ, միաժամանակ տարբերակված կարգավորվածություն և նեղ մասնագիտացված բնույթ, հետևաբար սնանկության իրավունքի *ընթացակարգային նորմերի* ամբողջությունը կարելի է համարել քաղաքացիական դատավարության իրավունքի ենթաձյուղ:

Սնանկության իրավունքի կարգավորման մեթոդը. Սնանկության իրավունքի իրավական կարգավորման մեթոդը իմպերատիվ-դիսպոզիտիվ և, այլ խոսքով՝ թույլատվական հրամայականը: Այս եզրահանգմանը գալիս ենք՝ վերլուծելով **1)** դրա մասնակիցների իրավունքների ու պարտականությունների բնույթը, ինչպես նաև **2)** իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմք հանդիսացող իրավաբանական փաստերի համակցությունը և **3)** իրավական սանկցիաների, դրանց կիրառման եղանակների և ընթացակարգերի բնույթը¹:

1) Սնանկության վարույթի շրջանակներում վարույթի ընթացքի վրա էական ազդող որոշումներ կայացնում է դատարանը՝ որպես սնանկության գործը վարող, ինչպես նաև պարտատերը կամ պարտատերերի ժողովը (խորհուրդը) և սնանկության կառավարիչը: Դատարանը, հանդես գալով պետության անունից, պարտականություն ունի ապահովել Օրենքով սահմանված պահանջների պահպանումը, ինչպես նաև ստուգել պարտատերերի կամ սնանկության գործով կառավարչի կայացրած որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը: Ներկայիս իրավակարգավորման պայմաններում Դատարանը ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ նաև՝ Օրենսգիրք)² և Օրենքով նախատեսված նորմերով և հետևում է դրանց խիստ պահպանմանը: Դատարանի գործունեության սահմանները բնութագրվում են **no procedat iudex ex officio** սկզբունքով, ինչը քաղաքացիադատավարական հարաբերությունների կարգավորմանը բնորոշ սկզբունք է, որպիսի պայմաններում էլ առավել տեսանելի է դառնում իրավունքի մեթոդի իմպերատիվ, հրամայական բնույթը:

Պարտատիրոջ կամ պարտատերերի ժողովի (խորհրդի) կայացրած որոշումներից են մինչև պարտապանին սնանկ ձանաչելը հաշտության համաձայնություն կնքելը կամ սնանկության դիմումը հետ վերցնելը, սնանկ ձանաչելուց հետո ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելը, պարտատերերի կողմից իրենց ներկայացված պահանջներից հրաժարվելը: Վերջիններս տնօրինչական գործողություններ են, որոնք աչքի են ընկնում իրենց թույլատվական բնույթով, այսինքն՝ այս պարագայում վարույթի մասնակիցները, ղեկավարվելով սեփական կամքով, որոշում են կայացնում իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

2) Սնանկության վարույթի շրջանակում իրավահարաբերությունների ծագումը նույնանում է վարույթի նախաձեռնմամբ, երբ դատարան է մուտքագրվում Օրենքի ձևական պահանջներին համապատասխանող՝ անձին սնանկ ձանաչելու վերաբերյալ դիմումը: Սահմանված պահանջների (օրինակ՝ ենթակայություն, պատշաճ սուբյեկտ՝ դիմող, դիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջներ և *res judicata* սկզբունք) չպահպանման դեպքում դատարանը ղեկավարվում է օրենքով և

¹ Տե՛ս Վաղարշյան Ա. Գ. Պետության և իրավունքի տեսություն-2. Դասախոսություններ, Երևանի պետական համալսարան, Երևան, 2017, էջ 186-187:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ընդունվել է 09 փետրվարի 2018թ., ուժի մեջ է մտել 09 ապրիլի 2018թ., ՀՕ-110-Ն, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374):

որոշում կայացնում կամ դիմումը վերադարձնելու, կամ դիմումի ընդունումը մերժելու վերաբերյալ: Սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշման կայացմանը հաջորդում է անձին սնանկ ճանաչելու վերաբերյալ վճռի կայացումը:

Սնանկության վարույթի դիմամիկ բնույթը նպաստում է իրավահարաբերությունների փոփոխմանը, ինչը դրսևորվում է 1) սուբյեկտային կազմի փոփոխությամբ, 2) մրցութային հարաբերությունների սուբյեկտների իրավունքների և պարտականությունների փոփոխությամբ, 3) վարութային մեխանիզմի զարգացմամբ, 4) վարույթի մասնակիցների կողմից ընդունված որոշումների փոփոխությամբ¹:

Ինչ վերաբերում է իրավահարաբերությունների դադարմանը, ապա դրանց համար հիմք են ծառայում մի շարք իրավաբանական փաստեր, այլ խոսքով՝ դրանց համակցությունը, որպիսիք պարունակող իրավանորմերը տեղ են գտել Օրենքում:

3) Իրավունքի տեսությունում «սանկցիա» եզրույթն ունի առավել տարողունակ բովանդակություն և ներառում է բոլոր այն բացասական հետևանքների ամբողջությունը, որոնք վրա են հասնում պոզիտիվ իրավունքի դրույթների չպահպանման պայմաններում: Ինչ վերաբերում է սնանկության վարույթում սանկցիաների կիրառմանը, ապա դրանք կարող են արտահայտվել ինչպես ֆորմալ դատական սանկցիաների կիրառմամբ՝ դատական նիստի կարգը չպահպանելու պայմաններում, այնպես էլ կողմերի համար Օրենքով նախատեսված այլ անցանկալի հետևանքների առաջացմամբ՝ Օրենքի պահանջների չպահպանման պայմաններում: Դրանցից է, օրինակ՝ դիմումին ներկայացվող պահանջների չպահպանումը, ինչը հանգեցնում է դիմումի վերադարձի կամ ընդունման մերժման, կամ Օրենքի 85-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը, երբ Օրենքի 46-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում դատարան չներկայացված չապահովված պահանջները համարվում են ստորադաս չապահովված պահանջներ, կամ Օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորմամբ վրա հասնող հետևանքները, երբ Կառավարիչը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում Օրենքով սահմանված իր լիազորությունները:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ողջ վերոշարադրյալն ընդհանրացնելով՝ եզրահանգում ենք, որ

1. Առկա են մի շարք տարաբնույթ տեսակետներ սնանկության իրավունքի՝ իրավունքի համակարգի կառուցվածքային տարրերից որևէ մեկին համապատասխանելու հարցում,

2. Սնանկության իրավունքի նորմերն աչքի են ընկնում են իրենց միախառնված բնույթով, այսինքն՝ դրանք արտահայտվում են նյութաիրավական և դատավարական, ինչպես նաև հանրային-իրավական և մասնավոր-իրավական բնույթով,

3. Սնանկության իրավունքի կարգավորման առարկան այն գույքային հարաբերություններն են, որոնք աչքի են ընկնում հատուկ, որոշակի պարտավորությունների և պարտականությունների չկատարման պայմաններում էական հետևանքների առաջացմամբ²,

4. Իրավունքի կարգավորման մեթոդը իմպերատիվ-դիսպոզիտիվն է, քանի որ վարույթի իրավական կարգավորմամբ դատարանին առանձնահատուկ դեր է հատկացվել՝ հետևելու իմպերատիվ նորմերով սահմանված կանոնների պահպանմանը, իսկ որոշ հարցերում էլ կողմերին տրվել է հայեցողություն՝ տնօրինելու սեփական սուբյեկտիվ իրավունքները,

¹ Տե՛ս նույն տեղում, էջեր 149-150:

² Տե՛ս **Телюкина М. В.** Предмет, метод, цели, принципы и иные характеристики конкурсного права // Труды Института государства и права РАН, Том 12, № 6, М., 2017, էջ 66:

5. Իրավունքը ՀՀ-ում կարգավորված է օրենսդրական ակտերով, որոնք բավականին հանգամանալից կարգավորում են ինչպես դատավարական, այնպես էլ նյութաիրավական բնույթի հարաբերություններ,

6. Հաշվի առնելով սնանկության և քաղաքացիական իրավունքների մի շարք ընդհանրություններն ու տարբերությունները՝ սնանկության իրավունքի նյութաիրավական հարցեր կարգավորող իրավանորմների ամբողջությունը կարելի է դիտարկել որպես քաղաքացիական իրավունքի ինստիտուտ, իսկ սնանկության և քաղաքացիական դատավարության իրավունքների սերտ փոխկապվածությունը, ինչպես նաև սնանկության վարույթի՝ որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձևի առանձնահատկությունները հաշվի առնելով կարելի է պնդել, որ սնանկության իրավունքի վարույթային հարցեր կարգավորող իրավանորմների ամբողջությունը քաղաքացիական դատավարության իրավունքի ենթաճյուղ է, այսինքն՝ միանշանակ «ախտորոշումը» սնանկության իրավունքի՝ որպես իրավունքի համակարգի որևէ կառուցվածքային տարր լինելու վերաբերյալ, կհանգեցնի սխալ եզրակացության, քանի որ դրա բարդ և համալիր բնույթը մշտապես հակասական տեսակետների բախում է առաջացնելու:

7. Այսպիսով, վերոշարադրյալի համատեքստում անդրադառնալով սնանկության իրավունքը՝ որպես իրավունքի ճյուղ համարելուն, հարկ է նշել, որ չի կարելի այն «բարձրացնել» իրավունքի ճյուղի մակարդակի, քանի որ դրա առարկան հիմնվում է մասնավոր-իրավական՝ հատկապես քաղաքացիական և քաղաքացիական դատավարության իրավունքների իրավակարգավորումների վրա, և սնանկության վարույթի էական տարբերությունը քաղաքացիաիրավական վեճի քննության վարույթից սնանկ ձանաչված անձի առկայությունն է, ինչի շուրջ «պտտվում» է ողջ վարույթը: Ինչ վերաբերում է իրավունքի ինստիտուտ համարվելուն՝ պետք է ընդգծել, որ սնանկության իրավունքն աչքի է ընկնում բավականին հանգամանալից կարգավորմամբ և կարգավորվող հարաբերությունների բազմազանությամբ, ինչն էլ իր հերթին հակասում է իրավունքի ինստիտուտին առաջադրվող պահանջներին, քանի որ վարույթի յուրաքանչյուր փուլն արդեն իսկ աչքի է ընկնում իրեն հատուկ նպատակներով և ընթացակարգերով, որոնք ինքնին կարող են համարվել իրավունքի ինստիտուտներ: Ընդ որում, սնանկության իրավունքն իրավունքի ինստիտուտ համարելիս կառաջանա հակասություն՝ արդյո՞ք կարող է իրավունքի ինստիտուտը ինստիտուտներ պարունակել, և դրանք համարժեք լինելով՝ հարաբերակցվեն ինչպես մասը և ամբողջը:

Ամփոփելով ողջ վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ սնանկության իրավունքը՝ իրավունքի համակարգի ինքնատիպ կառուցվածքային տարր է, ինչն աչքի է ընկնում կարգավորվող հարաբերությունների բազմազանությամբ, իրավունքի նորմերի տարաբնույթությամբ և կարգավորման առարկայի էական բարդությամբ: Այն «ավելին» է, քան իրավունքի ինստիտուտը, կարգավորվող իրավահարաբերությունների բնույթով և շրջանակով առավել բազմազան, քան իրավունքի ենթաճյուղը, և իրավունքի համակարգի կառուցվածքային այլ տարրերից առավել «կախյալ», քան իրավունքի ճյուղը, հետևաբար նպատակահարմար ենք գտնում տեսության մեջ ներդնելու սնանկությանը բնորոշ՝ իրավունքի համակարգի կառուցվածքային նոր տարր՝ հաշվի առնելով դրա առանձնահատկությունները և ընդհանրությունները:

ПРАВО О БАНКРОТСТВЕ КАК СТРУКТУРНЫЙ ЭЛЕМЕНТ ПРАВОВОЙ СИСТЕМЫ

Гарик Авагян

*Судья суда по делам о банкротстве Республики Армения,
Преподаватель кафедры гражданского процесса ЕГУ,
Преподаватель Французского университета в Армении
garik.avagyan@ysu.am
ORCID - 0009-0007-5156-6126*

Мариам Мелконян

*Студент четвертого курса юридического факультета ЕГУ
mariam.melkonyan10@edu.ysu.am
ORCID - 0009-0002-8491-2308*

Абстракт: Единого подхода к законодательству о банкротстве как структурному элементу правовой системы не существует ни в теории права, ни на практике. В РА отсутствуют научные исследования по вышеуказанной проблеме, поэтому целью работы является, прежде всего, дать содержательную и теоретическую характеристику законодательства о банкротстве, а затем попытаться выяснить его место и роль в законодательстве о банкротстве. Правовая система РА. По мнению авторов, законодательство о банкротстве представляет собой сложный, многослойный и комплексный структурный элемент правовой системы, который не характеризуется в полной мере ни одним из уже известных теории права структурных элементов правовой системы. Поэтому предлагается ввести в теорию новую категорию, определяющую структурные элементы закона о банкротстве или аналогичной правовой системы, которая будет полностью соответствовать их природе. Его реализация окажет существенное влияние на развитие права в теоретическом и практическом плане, поскольку четкое определение структурного элемента правовой системы и выделение его актуальности помогает избежать проблем в юридической практике, формированию единых подходов и создает перспективы для развития.

Ключевые слова – *правовая система; структурные элементы правовой системы; право о банкротстве; материальные и процессуальные нормы; публичное и частное право; сложный структурный элемент правовой системы; дифференцированная форма гражданского судопроизводства.*

BANKRUPTCY LAW AS A STRUCTURAL ELEMENT OF THE LEGAL SYSTEM

Garik Avagyan

Judge of the Bankruptcy Court of the Republic of Armenia,

Lecturer at the Chair of the Civil Procedure, YSU

Lecturer at the French University in Armenia

garik.avagyan@ysu.am

ORCID - 0009-0007-5156-6126

Mariam Melkonyan

Fourth-year undergraduate student of the Faculty of Law, YSU

mariam.melkonyan10@edu.ysu.am

ORCID - 0009-0002-8491-2308

Abstract: There is no unified approach to bankruptcy law as a structural element of the legal system, both in legal theory and in practice. In RA, there are no scientific researches in connection with the above-mentioned problem, so the aim of the work is to first of all give the substantive and theoretical characteristics of bankruptcy law, and then to try to clarify its place and role in the RA legal system. According to the authors, bankruptcy law is a complex, multi-layered and complex structural element of the legal system, which is not completely characterized by any of the structural elements of the legal system already known to legal theory. Therefore, it is proposed to introduce a new category defining the structural elements of the bankruptcy law or a similar legal system into the theory, which will fully correspond to their nature. Its implementation will have a significant impact on the development of law in theoretical and practical terms, because the clear definition of the structural element of the legal system and highlighting its relevance helps to avoid problems in legal practice, the formation of unified approaches and creates prospects for development.

Keywords – *legal system; structural elements of the legal system; bankruptcy law; material and procedural norms; public and private law; a complex structural element of the legal system; a differentiated form of civil litigation*